

լով հանդերձ այդ զգուեկի մարդուն բոլոր ախորժակները -մասնաւորէր իր տաղանդը հազարումէկ միջոցներով բռնութիւն, պոռալ, դրամ, ծեծ, առեւանգում- հրապուրելու կիները օտար էֆէնտիններուն, պէյերուն, որոնք Պրուսայէն կը դրկուէին, յանձնարարուած առաջին պարտականութիւն նկատել պայքարը բռնապետներու, կեղեքողներու, օրէնքը անասատողներու դէմ- չաբաթ մը ետք հպատակ կը դառնային անոր ահաւոր կամքին: Կառավարութեան մէջ կառավարութիւն: Տարագը քիչ անգամ այսքան իրաւ ըսած է, որքան հոս կը թելադրէ: Այդ անգիր եղեռնին սուտ գէնքը, հեռագիրը: Կը մտնէր իր տունին պէս հեռագրատուն, որուն թիկնաթոռները իր նուէրն էին, կը հայհոյէր քարտուղարին կնոջը կամ քրոջը- իր բարձր զուարթ տրամադրութեան յայտարար- կ'ապրսպրէր երկու սուրճ, քիչ անգամ նարկիլէ, կը պարպէր իր ոսկի ծխատուփին պարունակութիւնը, քարտուղարի տփիկին: Ասիկա պայմանադրական հրամանն էր գործիքին բացման: Յետոյ իր բառերը կը թելադրէր քեաթիպ էֆէնտին: Ընդհանրապէս, կուսակալն էր հասցէն, նեղ պարագային՝ Պոլիս, Սէրայը հիւմայուն (նուիրական պալատը Սուլթանին): Նոյն օրը, իրիկուն չեղած պատասխանը կու գար: Ընդդիմադիրը կը կապէր իր կարասիններուն հակը ու լուսդէմ, ամօթէն կատղած, բայց անկարող, կը քշուէր մինչեւ ճէհէնեմին ճոթը:

Բաւական՝ այսքանը խուլ ու անկարեկի այն աշխարհէն, որուն պարագրկումը անհնար է թուղթերով: Մեր ամէն մէկ օրը նման ապրումներու հետ ընդելոյզ, ինկեր է մեր ետին: Այդ է պատճառը, որ մենք զարհուրինք մեր անցեալէն, անկէ փախիլ ստիպուինք ամէն ըուպէ, ու զայն ոգեկոչելու հարցը վերածենք, առանց մեր գիտնալուն, միայն ու միայն եղբրականութեան: Ահա թէ ինչու իմ սերունդին հոգին ըլլայ այնքան տարբեր կանխողէն, ինչպէս յաջորդէն: Ու սեւը, որով աղձաւոր, կաշումն է իմ գրականութիւնը, դիրտն է, մրուրն է այդ ապրումներուն: Բարեբախտաբար զանգուածը, գեղա-